

ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ՌԵՇԱՐՈՒԹԵԱՆ

ՀԱՄԱՍՏԵՂԻ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԵԱՆ ՅԻՍՆԱՄԵԱԿԸ

Յիսնամեակին է Համաստեղի գրական գործունեությունը: Իր ծննդեան ալ եօթնամեամեակը:

Այս բարերաստ առիթով, վերջերս, Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ կազմուեցաւ Կեդր. Յանձնախումբ մը, որուն նպատակն է՝ դրահատել ու պատուել Հայ Մշակոյթի մեծ վաստակաւոր մը՝ Համաստեղը, համահայկական ու միասնական Յորելեանով մը:

Ո՛չ մէկ տարակոյս, որ ազգային ու մշակութային ամէն գործունէութիւն քաջալերելու կոչումն ունեցող ՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ ուրախութեամբ պիտի լսէ այս ազուր լուրը. եւ առաջին առթիւ իսկ սիրով ու հպարտութեամբ պիտի հաղորդէ զայն իր ընթերցողներուն եւ իր շրջանի հասարակութեան: Նոյն ատեն պիտի ընէ ամէն ջանք, որ մշակութային այս ձեռնարկով շատե՛ր հետաքրքրէ, շատե՛ր ոգեւորէ:

Մեր յոյսն է՝ պիտի ըլլայ նաեւ մեր ջանքը — որ այս շարժումը իր բարերար ազդեցութիւնը ունենայ, հայկական շրջաններու մեր ուսանող բազմութիւններուն վրայ եւս — պատանի՛ թէ երիտասարդ:

Այս մասին մտածել ու անհրաժեշտ ջանքեր կատարել՝ անպայման կրնայ հայկականօրէն դաստիարակիչ ըլլալ մեր ուսանողներէն շատերուն, տեղ տեղ հայախօս, քանի տեղեր ալ՝ ոչ-հայախօս — հիւրընկալ երկրին լեզուն խօսող եւ այդ երկրին վարժարաններէր յաճախող:

Այս ազդեցութիւնը — եթէ նոյնիսկ երբեմն ժամանակաւոր — հայ երիտասարդութեան համար կրնայ ըլլալ սթաիկացուցիչ մը, որ մտածել տայ զոնէ ոմանց: Մանաւանդ, երբ այս երիտասարդները տեսնեն թէ ո՛րքան շատեր իրենց սիրտն ու հոգին կը դնեն բոլորի՛ն խօսող ու բոլո՛րը ողեւորող այս ձեռնարկին մէջ. ասոր նման ա՛յլ գործերու մէջ:

Համաստեղի այս Յորելեանը թո՛ղ ըլլայ լաւ տոյժ մը, որ հայ ժողովուրդի յաւերժութեան ձգտող առաջնորդներ՝ աւելի՛ հետաքրքրեն մեր բազմութիւնները հա՛յ գրականութեամբ ու հա՛յ մշակոյթի բոլոր նուիրեալներով, ամէն տեղ — սկսած Հայաստանէն՝ մինչեւ փոքր ու հեռուոր անկիւնները աշխարհի, ուր հայեր կ'ապրին ու կը տեղեկեն. ուր հայեր կը ջանան տոկա՛լ ու տեւել, Հայութեան ու Հայաստանի սիրոյն:

Մեծ յոյս ունինք որ Համաստեղի այս Յորելեանին առիթով, ջերմ ու սրտադին պիտի ըլլայ արձագանքը, նա՛եւ Հայաստանի մէջ:

Քաղցր է յիշել այստեղ թէ 1965ի վերջերը, Համաստեղի եօթնամեամեակի առթիւ, Հայաստանի ցոյց տուած սիրալիւ հետաքրքրութիւնը մեզ համար ալ եղաւ քաջալերական մղում մը:

Սա անցնող տարիներուն, յատկապէս Ամերիկայի մէջ, քանիներուն բազմաթիւ ու դադափարն էր եղած, համազգային տարողութեամբ տօնել Համաստեղի Յորելեանը. բայց է՛ք եղած մէկը, որ շարժումին իրական նախաձեռնողը դառնար, առանց Համաստեղին ալ դիտութեան ու հաւանութեան:

Բարերախտարար եղաւ վերջապէս՝ դրեթէ նըման բան մը:

Եւ այդպէսով ալ սկսաւ մեր բոլորին փափաքած շարժումը՝ ինքնարեւարար:

Մեր յոյսն է ու փափաքը, որ Համաստեղի հանգէպ սիրոյ ու յարգանքի ամէն արտայայտութիւն, եւ իր գրականութիւնը աւելի ծանօթացնելու ամէն ջանք, լայն արձագանք գտնեն ամէն հայ թերթի մէջ:

Հայ Մամուլի շինարար դերին հաւատքն ու բազմաթիւ ունեցող մեր ժողովուրդը ա՛յդ կը սպասէ:

Լաւ կ'ըլլար եթէ այս Յորելեանին նուիրուած բոլոր հանդիսութիւնները, ՈՐԲԱՆ ՀՆԱՐ Է, կատարուէին, մօտն ու հեռուն, առաջիկայ Մարտ, Ապրիլ ու Մայիս ամիսներուն:

Որոշ ժամանակի մը մէջ այս գործը սկսելու եւ լրացնելու ջանքը կրնայ նպաստել, որ հանրային ուղղութիւնն ու հետաքրքրութիւնը մնան՝ աշխոյժ ու խանդավառ:

Այս ուղղութեամբ մեծապէս գնահատելի պիտի ըլլայ ամէն աջակցութիւն, զոր պիտի ուզեն ընծայել մեր մտաւորականութիւնն ու մամուլը, այս Յորելեանը առաւելագոյն յաջողութիւն մը զարձակելու համար:

Նոյնպէս սիրելի ու գնահատելի պիտի ըլլայ ամէն գործակցութիւն, զոր նա՛եւ ժողովուրդի համեստ խաւերը պիտի բերեն՝ յաճախ անմուն, բայց հաւատարմ իրենց կամաւորներով, մեր բոլոր շրջաններուն մէջ:

Յարգանքներով

Յորելեանի Յանձնախումբի անունով,

Նախագահ

Քարտուղար

ԱՐԱՆ ՉԻՅԱՆ

ՅԱԿՈԲ ԽԱՇՄԱՆԵԱՆ

